«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Օժտված երեխաներ

ԱՌԱՐԿԱ -Հ.լեզու և գրականություն-----

ՀԵՂԻՆԱԿ ----------Հասմիկ Պետրոսյան----------

ՄԱՐԶ ------Կոտայքի մարզ----------

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Մեղրաձորի՝ Հ.Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց----------

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ---------- էջ 1

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------էջ 2 - 4

ԳԼՈՒԽ1. Օժտվածության հիմնահարցը մանկավարժության մեջ, դրա կարևորությունը և բացահայտումը ---------էջ 5- 7

ԳԼՈՒԽ2.Հոգեբանական օտարացումը օժտված երեխաների մոտ,օժտվածության բացասական դրսևորումների մանկավարժական և հոգեբանական պատճառները ----------էջ 8- 12

ԳԼՈՒԽ3.Օժտված երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացի հետազոտության արդյունքների խմբավորում-------էջ 13- 17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ---------- էջ 18- 19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ--- էջ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<< Բոլոր էական մտքերը բնորոշվում ու մեկնաբանվում են իրենց այն հատկությամբ, որ վերջիններս ի զորու են սնել ու փոփոխվել: Կարևորն այն է, որ վերջիններս փոփոխվում են ծառերի և ոչ թե ամպերի նման>>:

Ջ. Ռեսկին

Ամենից հաճախ օժտված երեխաների թվին են դասում նրանց, ովքեր խելացի են, կողմնորոշվող և տրամաբանող:Երեխաների օժտվածության ուսումնասիրությունն սկսվել է 20-րդ դարի առաջին տասնամյակից՝ շեշտը դնելով հենց մտավոր ունակությունների և դրանց առանձնահատկությունների վրա:Այդ ժամանակի ուսումնասիրությունները հիմնականում ուղղված էին օժտվածության վրա ազդող գործոնների ուսումնասիրմանը /սոցիալական ,ազգային, դաստիարակչական և այլն/:

Դժբախտաբար, 30-ական թվականներին նման ուսումնասիրությունները օժտվածության մասին դադարեցվեցին՝ ճիշտ համարելով<<բոլորը հավասար են>>սկզբունքը:Գերակշռում էր հիմնականում միջին կարողությունների տեր երեխաների վրա ուշադրությունը կենտրոնացնելու մոտեցումը:Օժտված երեխաները դուրս մնացին ընդհանուր ուսումնասիրության շրջանակից,այնինչ օժտվածության երևույթն ինքնին կարևորագույն և մանրազնին ուսումնասիրության կարիք ուներ:

Այժմ մոտեցումները փոխվել են. օժտված երեխաների թեման շատ արդիական է, քանի որ նրանք ինչպես ծնողի ու մանկավարժի, այնպես էլ հասարակության ու պետության աջակցության կարիքն են զգում:Աստիճանաբար օժտված երեխաների պահանջարկն աճում է, քանզի մերօրյա իրականությունն էապես զգում է խելացի, տաղանդավոր և ինտելեկտուալ երեխաների կարիք:

Հետազոտական աշխատանքիս ՆՊԱՏԱԿԸ՝

. Օժտված երեխաների տաղանդի խթանումը, նրանց կատարելագործման ուղիների զարգացումն ու աճը

. Վերջիններիս տաղանդի դրսևորմանը , հասարակության լիիրավ ու լիարժեք մասնիկ դառնալուն նպաստելը

Հետազոտական աշխատանքիս ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

ա. ուսումնասիրել օժտվածության դրսևորման առանձնահատկությունները երեխաների մոտ, նաև՝ ծնողի դերը այսպիսի երեխաների մոտ՝ օժտվածությունը <<զարգացնելու>> կամ <<սառեցնելու>> հարցում

բ. պարզել, թե ինչպիսի գործոններ են ազդում օժտված երեխաների վրա, ինչպիսի պայմաններ ու գործոններ պետք է ստեղծել օժտվածության բարեհաջող ուսումնասիրության համար

գ. բացահայտել օժտված երեխաների ուժեղ և թույլ կողմերը, վերջիններիս հետաքրքրություններն ու նախասիրությունները, ինչպես նաև՝ օժտված երեխաների կրթական գործընթացը բարելավելու համար ուսումնադաստիարակչական մեթոդների մշակման մեթոդները

դ. ճշգրիտ ուղիներ փնտրել նրանց պատշաճ ուսուցման ու դաստիարակության համար. ցույց տալ, թե ինչպես կարելի է աջակցել նման երեխաներին:

Վերը նշված խնդիրներին էական լուծումներ տալուց առաջ պետք է հաշվի առնել այն, որ մերօրյա տեսական ընկալմամբ՝ օժտվածությունը դիտվում է որպես մի խրթին հոգեբանական երևույթ, որն իր մեջ ներառում է թե՛ անհատի ողջ էությունը, թե՛ վերջինիս մտավոր կարողությունների առանձնահատկությունը: Օժտվածության բացահայտումը կախված է թե՛ սոցիալական իրավիճակից, թե՛ որոշակի ֆիզիկական առանձնահատկություններից:

Հետազոտողներն այն կարծիքին են, որ օժտվածությունն անհատի արժեքների յուրահատուկ դրսևորումն է:Այդ արժեքների կենտրոնում անհատի ինտելեկտն է, որը վերջինիս մոտ ավելի բարձր ու զարգացած է, քան իր տարիքայինների շրջանակում:

Նպատակից ելնելով՝ ուսումնասիրմանս առաջնային խնդիրն է անհատի ինտելեկտի ուսումնասիրությունը: Այն թերևս բազում չբացահայտված ու չմեկնաբանված կողմեր ունի:

Մյուս խնդիրը կապված է օժտված երեխաների նախասիրությունների ուսումնասիրության հետ:

Բանն այն է, որ օժտվածների մոտ շատ հաճախ ուսման հետ կապված պահանջկոտությունը, նոր ու հարստացված գիտելիքներ ձեռք բերելու անհագ ձգտումը երբեմն ցավալի հետևանքներ է ունենում: Հանուն նոր գրքի, նոր ինֆորմացիայի, պարապմունքի ու նոր գիտելիք ձեռք բերելու՝ օժտված երեխան պատրաստ է հրաժարվել ցանկացած քաղցրավենիքից, զբոսանքից ու նույնիսկ՝ քնից:

Հետազոտությանս թեման արդիական է, աշխատանքիս նպատակն ու խնդիրները արտահայտված են առաջիկա 3 գլուխներում:

ԳԼՈՒԽ 1

ՕԺՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԵՋ, ԴՐԱ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ

Օժտվածությունն ուսումնասիրելու համար կարևոր հանգամանք է նախևառաջ բացահայտել վերջինիս առանձնահատկությունները: Օժտվածությունը զուտ գիտական հիմնախնդիր լինելուց բացի՝ ձեռք է բերել նաև կիրառական նշանակություն:

Օժտված երեխաների կրթության և դաստիարակության հիմնախնդիրը մեր ժամանակներում դարձել է պետական մտահոգության առարկա և ստացել պետական պատվերի կարգավիճակ:

Օժտվածությունն ինքնին աննախադեպ է ու հետաքրքրաշարժ: Ուստի վերջինիս ուսումնասիրությունը խրթին , բայց կարևորություն ունեցող աշխատանք է:

Օժտվածության մասին պատկերացումները հաճախ զուգակցվում են շնորհաշատ մարդկանց տարօրինակությունների, հիվանդագին արտաքինի, իրական կյանքից հոգեբանական օտարացվածության հետ՝ ստեղծելով մի արտասովոր և դժվար հասկանալի անձնային կերպար: Իրականում ինչպիսին է օժտվածը, և որ երեխաներին կարելի է համարել օժտված: Այն որոշվում է բնածին նախադրյալներով: Իսկ թե որքանով դրանք կզարգանան, կախված է շրջապատից: Օժտվածությունը պահանջում է ուշադրություն և հոգատարություն: Շրջապատը կարող է խթանել կամ խոչընդոտել դրա զարգացմանը: Հետազոտողները տարբեր ժամանակներում խուսանավել են օժտվածության երևույթն ու դրա չափանիշները սահմանելու հարցում և տվել անորոշ ձևակերպումներ:

Հատկապես մտավոր զարգացման բարձր մակարդակով տարբերվող երեխաների հետ ուսունադաստիարակչական գործընթացը սովորական ընդունակություններով երեխաների հետ միևնույն խմբում կազմակերպելը կարող է հանգեցնել վտանգավոր հետևանքների:Օժտվածը, կորցնելով ուսման նկատմամբ հետաքրքրվածություններն ու դրդապատճառները, կարող է ձանձրանալ:Միաժամանակ նա իր ներքին ուժերը կարող է ուղղել հասարակության կողմից չընդունված, հակասոցիալական վարքագծի ձևավորմանը և դրսևորմանը:Այս առումով ՝ օժտվածության վաղ հայտնաբերումը և զարգացումը ունեն ոչ միայն անձնական, այլև պետական, հասարակական նշանակություն:

Ներկայումս օժտվածությունը մեկնաբանվում է հետևյալ հասկացությունների տեսանկյունից.

1.ինտելեկտ

2.կրեատիվություն/ ստեղծագործելու ընդունակություն/

3.մտքի ճկունություն և ընկալունակություն

Օժտված երեխաներն ավելի բազմակողմանի գիտելիքներ ունեն:Նրանք անկախ են իրենց դատողություններում, ինքնավստահ են, իշխող, ըմբոստանում են ճնշման և սահմանափակումների դեմ:Նրանք հակված են ինքնահիացման, շփվող են, հետաքրքրասեր, հարցասեր, ունեն հումորի զգացում, հարուստ երևակայություն և ճկուն , ինքնատիպ միտք:Այսպիսի երեխաները ոչ միայն շուտ են ընկալում, այլև ընկալում են յուրովի, ինքնուրույն մշակում են հարցերի սեփական պատասխաններ, խնդիրների լուծման նոր ու սեփական մեթոդներ:Նրանք լինում են իրենց տարիքին ոչ բնորոշ հասուն, ունենում են հարուստ բառապաշար՝ նույնպես տարիքին անհամապատասխան, իսկ ընդունակությունները վաղ են զարգանում:Օժտված երեխաներին հատուկ են նաև իմացական հետաքրքրությունները, ամեն ինչ մինչև վերջ հասկանալու ձգտումը, մեծ աշխատասիրությունը և աշխատունակությունը , որևէ բանի մեջ խորասուզվելու հատկությունը:Նրանք զարմանալի հեշտությամբ կարողանում են կապեր գտնել տարբեր երևույթների, հասկացությունների միջև:Նրանց ամեն ինչ հետաքրքրում է, ամեն ինչ անում են հաճույքով, փնտրում և գտնում են նոր խնդիրներ՝ առանց զգուշության ընդառաջ գնալով դրանց: Բացառիկ հիշողությունն ու ճկուն միտքը նրանց հեշտությամբ մղում են ինքնատիպ զուգորդությունների: Համբերատար են և համառ, սկսած գործը միշտ ավարտին են հասցնում, հանդուրժող են անորոշ իրավիճակների նկատմամբ:

Սովորաբար նրանց ընդունակությունների սրընթաց զարգացումն իր գագաթնակետին է հասնում 16-17 տարեկան հասակում: Դրանից հետո այդ տեմպն անկում է ապրում:

Օժտված երեխաներին կրթող և դաստիարակող անձինք մեծ պատասխանատվություն են կրում ՝ նրանց իմացական, հուզական և սոցիալական ոլորտների միջև զարգացման համամասնությունների պահպանման առումով:

Անպայման պետք է հաշվի առնել,որ երեխայի մեջ չպետք է միայն գիտնականի տեսնել և դաստիարակել: Միայն գիտելիքի կարիք չի զգում երեխան: Որքան էլ հաճելի և գայթակղիչ է օժտված ծնող կամ մանկավարժ լինելը, որքան էլ հեշտ է նրան սովորեցնելը, այնքան էլ պատասխանատու և դժվար է նրա դաստիարակությանը, սոցիալականացման գործընթացին մասնակից լինելը: Շնորհաշատ երեխան կարող է զարգացնել և դրսևորել իր ունակությունները՝ միայն շրջապատի աջակցության, խրախուսանքի, անձի լիարժեք և ներդաշնակ զարգացման պարագայում, ոչ թե իր անձին և առանձին ընդունակություններին տրված ոչ համապատասխան գնահատականները: Ամենակարևորը՝անհրաժեշտ է ապահովել օժտվածների կարողություններին համապատասխան ծանրաբեռնվածություն, որպեսզի չկորչի հետաքրքրությունը ուսման նկատմամբ:

Այն մարդիկ, որոնց բախտ է վիճակվել կրթել ու դաստիարակել օժտված երեխաների, պետք է հավասարապես կարևորեն ինչպես ընդունակությունների, այնպես էլ երեխայի անձի ներդաշնակ զարգացումը:

ԳԼՈՒԽ 2

ՕԺՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՕՏԱՐԱՑՈՒՄԸ ՕԺՏՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՈՏ

<< Օտարացում >> հասկացությունը հոգեբանական իմաստով բնութագրվում է որպես անձի այնպիսի կենսական հարաբերություններ աշխարհի հետ, որոնց դեպքում նրա գործունեության արդյունքը, հենց ինքը, ինչպես նաև այլ անհատներ ու սոցիալական խմբեր, հանդիսանալով որոշակի նորմերի, դիրքորոշումների և արժեքների կրողը, գիտակցվում են որպես իրեն հակառակ /

անհամապատասխանությունից մինչև տհաճություն և թշնամանք/: Դա համապատասխանաբար արտահայտվում է անձի անհանգստությամբ, մեկուսացվածության զգացմամբ, մենակությամբ, մերժվածությամբ, ես-ի կորստով և այլն:

Օտարացվածության երևույթի պատճառները բազմաթիվ են և բազմաբնույթ:Էապես փոխվել են երեխայի սոցիալականացման պայմանները, և փոփոխության են ենթարկվել հոգեբանական օտարացմանը նպաստող գործոնները:Մեր առջև խնդիր է դրվում ուսումնասիրել մանկական տարիքում հոգեբանական օտարացմանը նպաստող գործոնները ժամանակակից պայմաններում:

Երեխաների մեջ հոգեբանական օտարացման առաջացման պայմանները ուսումնասիրելիս նկատվեց, որ օտարացված երեխաների մեջ կային այնպիսիք, որոնք տարբերվում էին մյուս երեխաներից իրենց մտավոր , ստեղծագործական ընդունակություններով:Նրանք ունեին ոչ շաբլոն մտածելակերպ , հարցերին շատ յուրօրինակ պատասխաններ էին տալիս, հաճախ, հաճախ իրենք էին խորիմաստ հարցեր տալիս՝ նաև փորձելով պատասխանել իրենց իսկ հարցերին: Ինչպես հայտնի է, նկատված որակները բնութագրական են օժտված երեխաների համար:

Այդ երեխաները տարբերվում են մյուսներից իրենց յուրատիպությամբ, բացառիկ ընդունակություններով:Նրանք կարողանում են հեշտ հարաբերություններ հաստատել մարդկանց հետ, սրամիտ են , ակտիվ և ինքնուրույն:Սա այն դեպքում , երբ շրջապատը ընդունում է նրանց այնպիսին, ինչպիսին որ նրանք կան, և նրանց օժտվածությունը չի դառնում խնդիր:Ցավոք, շատ հաճախ՝ կապված իրնց յուրատիպ առանձնահատկությունների հետ, ոչ միշտ են գնահատվում և հասկացվում հասարակության կողմից ինչպես հարկն է:Նույնիսկ հակառակը՝ նրանք կարող են ինտելեկտուալ առումով հասակակիցներից հետ մնացող երեխայի տպավորություն թողնել:Ամենահայտնի

օրինակը հայտնի Ա.Էյնշտենի կենսագրությունից. նրան հեռացնում են դպրոցից՝ վատ առաջադիմության պատճառով:

Ինչ վերաբերում է օժտվածների առանձնահատկություններին, ինքնատիպությանը և ընդունակություններին, նրանք իրենց հասակակիցներից տարբերվում են մտավոր կարողություններով, յուրատեսակ պահանջմունքներով և ձանձրանում են հասակակիցների հետ շփվելիս:Հասակակիցները չեն կարողանում ընդունել և ներել նրանց այդ կարողությունները և արտասովոր հատկությունները:

Տաղանդավոր մարդկանց անցած ճանապարհի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ նրանց՝ օտարացման կանխարգելման և հաղթահարման, ինչպես նաև ընդունակությունների և անձի զարգացման համար համապատասխան նպաստավոր պայմաններ ստեղծելու գործում հսկայական է ընտանիքի դերը:Այո, օժտվածության զարգացման բարեհաջող ընթացքի գերակշռող մեծամասնության դեպքերում հիմնական կարգավորիչ գործառույթն իր վրա է վերցնում ընտանիքը:

Ֆ.Շոպենը ծնվել է մանկավարժի ընտանիքում:Հայրը լեզվի ուսուցիչ էր, իսկ մայրը՝դաշնակահար և երգչուհի:Փոքրիկը մեծացել է երաժշտական մթնոլորտում:Ելնելով երեխայի՝ դաշնամուրի հանդեպ ունեցած մեծ հետաքրքրությունից՝ ծնողները նպատակահարմար գտան ուսուցիչ վարձել նրա համար:Երեխայի հանդեպ ծնողների կողմից դրսևորվող ջերմ վերաբերմունքը տվեց իր բեղմնավոր արդյունքը, ինչին ականատես եղավ ողջ մարդկությունը:

Այսինքն՝ ընտանիքը պետք է հարգանքով վերաբերվի տվյալ անձին, նրա գործունեությանը , արտակարգ ընդունակությունների և առանձնահատկությունների դրսևորմանը: Օժտվածը նույնպես զգում է ջերմության, փոխըմբռնման և ինքնահաստատման պահանջ:

Օժտվածությունը կարող է ունենալ դրական կամ բացասական հետևանքներ:

Փորձարարական ուսումնասիրությունների ընթացքում, որպես բացասական հետևանքներ , բացահայտվեցին հավակնությունների և սոցիոմետրիկ կարգավիճակի շատ նեգատիվ դրսևորումներ՝ անձի բացասական որակներ, հոգեբանական նորագոյություններ, աֆեկտիվ, շեղված վարքագիծ և շատ սոցիո-ախտաբանական երևույթներ:Նշված երևույթները մեծ վտանգ են ներկայացնում իրենցից՝ անձի զարգացման շեղումների հոգեբանական նախադրյալ դառնալու առումով:Ուսումնասիրությունները բացահայտեցին հավակնությունների և կարգավիճակի բացասական դրսևորումների որոշ սոցիալ- հոգեբանական պատճառներ, որոնց մեջ գերակշռում են օժտվածների առանձնահատկությունները:

1. Օժտվածության երևույթը մասսայական բնույթ չի կրում, և ծնողները շտապում են ի ցույց դնել բոլորին՝ ամենատարբեր առիթներով ստիպելով երեխային հասարակությանը ցույց տալ օժտվածությունը հաստատող փաստեր:Մանկական հասակից երեխան շրջապատում լսում է միայն զարմանքի և հիացմունքի բացականչություններ:Մշտական հնչող գովասանքը և խրախուսանքը խախտում են նրա հոգեկան կառուցվածքի՝ իմացական, զգացմունքային, գնահատման բաղադրիչների միջև եղած համամասնությունը, ձևավորում ոչ ճիշտ արժեքների համակարգ:Այսպիսի <<ես>>-ի կոնցեպցիայի ձևավորումը հանգեցնում է սխալ ինքնընկալման՝ որպես սոցիալական արդյունք:Նրանք ձգտում են արդարացնել իրենց մասին եղած կարծիքը, իրենց առջև դնում են իրենց ուժերից վեր խնդիրներ և փորձում լուծել դրանք:Արդյունքում՝ երբ չեն կարողանում իրագործել , սթրեսային իրավիճակներում են հայտնվում , որը վնաս է հասցնում անձի զարգացման հեռանկարին,սպառնում նրա հոգեկան առողջությանը:
2. Որպես կանոն՝ օժտվածները իրենց պատկերացնում են միայն լիդերի դերում:Եթե չի հաջողվում լինել առաջնորդի դերում, ինքնագնահատականը

պահպանելու համար սկսում են հատուկ պաշտպանական ձևեր մշակել:Շուտով դառնում են կռվարար, ագրեսիվ , մեծամիտ ու կոպիտ:

3. Բոլոր օժտվածներն էլ ունենում են գերարժեքության բարդույթ:Արտակարգ ընդունակությունը սեփական անձի մասին կազմում է դրական հույզերով, բարձր հավակնությունների գործոն:Գերարժեքությունը դառնում է նեգատիվ դրսևորման պատճառներից մեկը:
4. Նրանց առանձնահատկություններից է հոգեկան մեծ ակտիվությունը, որը գրեթե միշտ ուղեկցվում է տևական ու խոր աֆեկտիվ վիճակներով:Նրանք նաև գերզգայուն են:Ընկալման արագ տեմպը նպաստում է, որ շրջապատում ամեն ինչ ընկալեն, վերլուծեն, համադրեն, իմպուլսիվ գործողություններ կատարեն:Սխալի դեպքում բացասական հույզերի ու աֆեկտիվ ապրումների պատճառ են ունենում:
5. Նրանց մոտ պահպանված է եսակենտրոնությունը՝ ամեն ինչ ընկալել միայն սեփական տեսանկյունից:Դեռահասը, մտածելով միայն սեփական հաջողությունների մասին, կտրվում է իրականությունից, դառնում ագրեսիվ:
6. Մյուս առանձնահատկությունը շրջապատին դժգոհության առիթ է տալիս: Սուր միտք ունենալով՝ ընդհատում են զրուցակցին, ընկերոջը, մանկավարժին:Ուղղումներ են անում նույնիսկ ուսուցչին՝ ապացուցելու համար իրենց անհատական տարբերությունն ու մտքի թռիչքը, իսկ հասակակիցներին անցկացնում իրենց չափանիշների ֆիլտրով և մերժում նրանց:
7. Պարզվում է՝ ընտանիքի միակ զավակներն ավելի դժվար են հարմարվում և հաղորդակցում , քան բազմազավակ ընտանիքի երեխաները:Ծնողազուրկ կամ անապահով դեռահասները հոգեպես իրենց ավելի ճնշված են զգում, անվստահ են իրենց ուժերի նկատմամբ, ունեն թերարժեքության բարդույթ:

ԳԼՈՒԽ 3

ՕԺՏՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ, ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄ

Ցանկալի է երեխաներին դիտարկել նաև դասերի, խաղերի ընթացքում , որոշել նաև իմացությունը և կրեատիվությունը / համապատասխան թեստերով/ և ամբողջացնել:

Հետազոտողներ Ֆ.Թալթը և Լ.Բեկերը ծնողներին և մանկավարժներին առաջարկում են հետևյալ հարցաշարը, որը հնարավորություն է տալիս բացահայտել կրտսեր դպրոցականների օժտվածության նշանները:Պետք է պատասխանել <<այո>> կամ << ոչ >>:

1.Երեխան նախաձեռնող է, շարժուն, կենսուրախ:

2.Նա պատրաստակամորեն է արձագանքում ամեն նորույթի:

3. Սիրում է խորհրդավոր, անհասկանալի ամեն բան:

4. Հաճախ մեծահասակների աջակցության կարիքն է զգում:

5. Բավականին շուտ է շեղվում և կիսատ թողնում սկսած գործը:

Եթե բոլոր դատողություններին պատասխանել եք << այո >>, ապա առկա են երեխային ընդունակ համարելու հիմքերը:Իսկ եթե 4-րդ և 5-րդ կետերին պատասխանել եք <<ոչ >>, ապա պատասխանեք նաև հետևյալ հարցերին.

1. Սիրում է տալ և լուծել դժվար հարցեր:
2. Ունի իր տեսակետը և համառորեն պնդում է այն:
3. Սկսած գործը հասցնում է մինչև վերջ:
4. Որոշ առարկաների նկատմամբ ունի հատուկ հակում:
5. Դրված նպատակին հասնելու մեջ համառ է:
6. Իրեն հետաքրքրող թեմաներից և առարկաներից տալիս է շատ հարցեր:
7. Հետաքրքրությունները բավականին կայուն են:
8. Հետաքրքրությունը բավականին կայուն է:
9. Իր հասակակիցների մեջ շատ ընկերներ ունի:
10. Հաճախ չի համաձայնում մեծահասակների կարծիքի հետ:
11. Հաճախ լինում է եսասեր:

Եթե բոլոր հարցերին պատասխանել եք <<այո >>, ապա խոսքը գնում է հնարավոր օժտվածության մասին:Վառ արտահայտված օժտվածությունը որոշելու համար պետք է պատասծանել հետևյալ հարցերին.

1. Երեխան ընդունակություններ է դրսևորում տարբեր ոլորտներում:
2. Ունի ավելի մեծ տարիքի 1-2 ընկեր:
3. Խոսքը լավ է զարգացած, ունի հարուստ բառապաշար և լավ է հասկանում լեզվական նրբությունները:
4. Երեխան միշտ փնտրում է ինքնուրույն լուծումներ:
5. Վիճելի հարցերում հենվում է սեփական կարծիքի վրա, չի սիրում համընդհանուր, ընդունված դատողությունները:

6. Դժվար իրավիճակներում իր վրա է վերցնում պատասխանատվությունը:
7. Հաճախ ավելի հասուն , << ոչ իր տարիքի >> տպավորություն է թողնում:
8. Լավ գիտի իր հնարավորությունները և այն, ինչ ուզում է անել:

Եթե բոլոր հարցերին պատասխանել եք <<այո >> , ապա երեխայի մոտ առկա է վառ արտահայտված օժտվածություն:

Օժտված երեխաները շատ ավելի արագ են ընկալում մատուցվող նյութը ,այդ իսկ պատճառով անհրաժեշտ է մշակել և սահմանել վերջիններիս ուսուցման փոքր-ինչ տարբեր մեթոդներ:

Սովորաբար առանձնացնում ենք օժտված երեխաների ուսուցման հետևյալ երկու մեթոդները՝ ԱՐԱԳԱՑՈՒՄ և ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄ: Արագացված ուսուցումը ենթադրում է << թռիչքային >> դասարանների առկայություն կամ շուտ է հաճախում դպրոց:Այս միջոցը նպատակահարմար է կիրառել գիտելիքների արագ յուրացման առումով, բայց սոցիալական առումով ունի իր թերությունները:Օժտվածը, միևնույն խմբում սովորելով ավելի հասուն և սովորական ընդունակություններով երեխաների հետ, կարող է ունենալ հարմարման, շփման , այլ սոցիալական խնդիրներ, ինչպես նաև ներանձնային կոնֆլիկտներ:Այս պարագայում մեծամասամբ երեխաները սոցիալապես չեն հասունանում:Իսկ դա կարող է խոչընդոտել ընդունակությունների, ինչպես նաև անձի ներդաշնակ զարգացմանը:

Սովորական դպրոցական մթնոլորտում արագացումը դառնում է առավել վաղ տարիքում երեխայի գիտելիքների աննախադեպ աճի դրդապատճառ:Արդյունքում երեխան առաջին, երկրորդ դասարանից միանգամից տեղափոխվում է ավելի բարձր դասարաններ:Այսպիսով ստացվում է, որ 13-15 տարեկան հասակում երեխան հայտնվում է

ավարտական դասարանում և նույնիսկ՝ ընդունվում բարձրագույն ուսումնական հաստատություն:

Արագացման պրոցեսը ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր:Մի կողմից երեխան ստանում է իր հնարավորություններին համապատասխան լարվածություն՝ դրանով իսկ խուսափելով իր համար չափազանց ձանձրալի ու միապաղաղ դպրոցական դասընթացից, մյուս կողմից էլ , սակայն, նման լարվածությունը վաղ տարիքում և հասարակական նորմերին ու պայմաններին դեռ նոր-նոր ընտելացող դեռահասին շփոթության ու ծանրաբեռնվածության է բերում:

Արագացված ուսուցման ծրագրի կազմման ժամանակ հարկավոր է հետևել որոշակի պահանջների.

. Աշակերտները պետք է ցուցաբերեն որոշակի հետաքրքրություն ծրագրի հանդեպ և ունենան բարձր ընդունակություններ այն ոլորտում, ուր կիրառվելու է արագացումը:

. Նրանք պետք է բավական հասուն լինեն սոցիալական և հուզական առումներով:

. Անհրաժեշտ է ծնողների համաձայնությունը, բայց պարտադիր չէ նրանց գործուն մասնակցությունը:

Հարստացնող ուսուցումն իրականացվում է լրացուցիչ պարապմունքների միջոցով՝ ամենատարբեր խմբակներում և նախասիրական պարապմունքներում: Այս մեթոդի թերությունն էլ այն է, որ երեխան , շարունակելով ուսանել սովորական դասարաններում, իր ինտելեկտին համարժեք ծանրաբեռնվածություն կարող է չստանալ և ձանձրանալ:Այս մեթոդը իրականանում է հիմնականում անհատական պարապմունքների, արտահերթ դասընթացների միջոցով, որոնց ընթացքում երեխային գիտելիքը տրվում է հատուկ և նախապես մշակված ձևով:Այս պարապմունքների ընթացքում երեխային գիտելիքը տրվում է հատուկ և նախապես մշակված ձևով:Անհատական մոտեցում է ցուցաբերվում յուրաքանչյուր

անհատի:Այս պայմանները խթան են հանդիսանում օժտված երեխայի կրթական և ուսումնական պրոցեսը հաջողակ և պրոդուկտիվ դարձնելու համար:

Ուսուցման հարստացումն սկսել է կիրառվել վաղ:Մանկավարժների մեծամասնությունը գտնում է, որ երեխային հնարավորություն է տալիս հուզականորեն դաստիարակվել հասակակիցների միջավայրում՝ միաժամանակ զարգացնելով նաև ընդունակությունները:

Հարստացնող ուսուցման ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվում զարգացնող, ինտեգրատիվ, և կարգավորող ծրագրերին:Դրանք կարող են ուղղված լինել տարբեր նպատակների.

. Կարգավորող ծրագրեր.ստեղծվում են այնպիսի օժտված երեխաների համար, որոնք ունեն հուզական և վարքային դժվարություններ:

. Զարգացնող ծրագրեր. նպատակաուղղված են հուզական ոլորտի վիճակի բարելավմանը:Այստեղ օգտագործվում են այնպիսի վարժություններ, ինչպիսիք են դերային մարզումները, քննարկումները փոքր խմբերում և այլն:

. Ինտեգրատիվ ծրագրեր. միավորում են ճանաչողական և հուզական բաղադրիչները:Դրանք կարելի է բաժանել այնպիսի ենթածրագրերի, որոնք ուղղված են կյանքի արժեքների քննարկմանը և առնչվում են ինքնաիրացման հիմնախնդիրներին:

Հարստացնող ուսուցումն ուղղված է ստեղծագործական մտածողության զարգացմանը:Այստեղ կարող են կիրառվել այնպիսի հայտնի վարժություններ, որոնք խթանում են ստեղծագործական ակտիվությունը: Սակայն ինչպես արագացված ուսուցման մեթոդը , այնպես էլ հարստացման պրոցեսում կարող են գրանցվել զգալի բարդություններ:Խնդիրն այն է, որ երեխան արտահերթ ու անհատական պարապմունքների հետ զուգահեռ շարունակում է հաճախել դպրոց և ստիպված է լինում յուրացնելու նաև դպրոցական ծրագրով նախատեսված նյութը, ինչը նրան կրկին հասցնում է շփոթության և շատ հաճախ գերծանրաբեռնվածության հետևանք դառնում:

Հետազոտողները համակարծիք են, որ լավագույն արդյունքի հասնում են այն դեպքում , երբ միաժամանակ համապատասխան փոփոխությունների են ենթարկվում ինչպես ուսումնական ծրագրերի բովանդակությունը, այնպես էլ ուսուցման ձևերը: Արագացման և հարստացման ռազմավարությունների համեմատությունը ցույց է տալիս, որ դրանք, ըստ առաջադրված նպատակի և խնդիրների՝ կարող են հաջորդել մեկը մյուսին՝ լրացնելով միմյանց:

.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

. Օժտված երեխաների կրթության և դաստիարակության հիմնախնդիրը մանկավարժության և հոգեբանության արդիական, վիճահարույց հիմնախնդիրներից է, որը լուրջ հետազոտության և մեկնաբանման կարիք ունի:Տաղանդավոր երեխաների վաղ բացահայտումը, նրանց դաստիարակությունը և ուսուցումը կազմում են կրթության համակարգի կատարելագործման գլխավոր խնդիրներից մեկը:

. Օժտված երեխաների հուզական ոլորտի զարգացումը՝ այսինքն հուզականության, ինտելեկտի ձևավորումը, իր տեմպերով զիջում է մտավոր գործընթացի զարգացմանը, որը բերում է անհամամասնությունների օժտվածների հոգեբանական զարգացման գործընթացում:

. Օժտված երեխաները իրենց գործունեության ընթացքում ունենում են սոցիալական հարմարման, միջանձնային շփման խնդիրներ, որոնք կարելի է լուծել համապատասխան համալիր մեթոդների կիրառմամբ:

. Օժտված երեխաների՝ բացառիկ ընդունակություններով օժտված լինելու փաստը դեռևս չի նշանակում միայն դրական երևույթների առկայություն:Այն իր հետ առաջ է բերում տարաբնույթ մանկավարժական և հոգեբանական հիմնահարցեր, որոնք չլուծվելու դեպքում կարող են պայմանավորել նաև բացասական երևույթներ:

. Օժտված երեխաներն, առանձնանալով իրենց տարաբնույթ ընդունակություններով և հոգեբանական առանձնահատկություններով, զգում են ինչպես ընտանիքի, այնպես էլ դպրոցի և հասարակության աջակցության կարիքը, ինչը մեր հասարակության կողմից հատկապես անտեսված է:

. Օժտված երեխաների վաղ հայտնաբերումը նրանց անձի զարգացման պայմաններից է:Որքան վաղ ապահովվեն համապատասխան պայմանները, այնքա ն սահուն կընթանա երեխայի անձի զարգացումը, և կձևավորվի լիարժեք մարդ:Այսինքն՝օժտված երեխան յուրատեսակ հոգեբանական աջակցության և օգնության կարիք ունի:

. Մանկավարժական միջամտության և նպատակաուղղված գործունեության կարիք հավասարապես զգում են ինչպես չառաջադիմող, այնպես էլ արտակարգ ընդունակություններով երեխաները:

. Անհրաժեշտություն կա ստեղծել այնպիսի հաստատություններ, որոնք կզբաղվեն օժտված երեխաների բացահայտմամբ, կունենան պետական հովանավորություն:Խրախուսելի է, որ Ա.Շիրակացու անվան ճեմարանում գործում է օժտված երեխաների ուսումնասիրության լաբորատորիա, որն զբաղվում է վերոհիշյալ խնդիրներով:Այսինքն՝ օժտված երեխաների ուսուցումը պետք է կազմակերպվի այնպես, որ նրանք սովորեն առանձին դասարաններում և հատուկ ծրագրով:Դա նպատակահարմար է ինչպես ընդունակությունների զարգացման, այնպես էլ անձի ձևավորման, սոցիալական հարմարման և վարքի կարգավորման առումով:

. Օժտված երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացի ճիշտ կազմակերպումը ժամանակի պահանջներից է, քանի որ քաղաքակիրթ միտքը

ուղղորդում են հենց տաղանդավոր մարդիկ, և անթույլատրելի է ցանկացած անփութություն՝ մտավոր ռեսուրսների նկատմամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հարությունյան Հ.Ս.<<Հոգեբանությունը և կյանքը. օժտվածության բացասական դրսևորումների մանկավարժահոգեբանական պատճառները>> Երևան 2002, էջ 240
2. Антонян Ю.М. <<Психологические отчуждение личности и преступное поведение >> Ереван 1987, стр.63
3. Белова Е. С. <<Одаренность малыша >> Москва 2004, стр.140
4. Ушакова Д. В. <<Психология одаренности >> Москва 2000, ст.96
5. Сборник. перевод с англ.<<Одаренные дети >> Москва 1991,стр. 94